ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 48/38506

« 23 » 05 2019թ.

Ինֆորմացիային ազատություն
Կենտրոն ՀԿ նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ 2018թ. ընթացքում Փ. Բուզանդի 1/3 շենքի որոշ վարձակալների, այդ թվում՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին, համաձայն ընկերության հետ ունեցած սպասարկման պայմանագրերի վճարումների ուշացրած օրերի համար սխալմամբ տույժեր չեն հաշվարկվել: 2019թ. մարտի 1-20-ը ընկերությունում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացրած աուդիտի արդյունքներով սույն փաստն արձանագրվեց և հանձնարարվեց ընկերությանը 2019թ. ընթացքում գանձել վարձակալներից ուշացված օրերի համար աուդիտի կողմից հաշվարկված 1020.0 հազ. դրամի տույժերը: Հիմք ընդունելով աուդիտորական հաշվետվությունը, ընկերությունը «Ինֆորմացիայի ազատության կենտրեն» ՀԿ-ին ս.թ. ապրիլի 30-ին ներկայացրել է AG350532538 հարկային հաշիվը, որտեղ բացի ամսական վճարից, ներառվել է նաև ՀԿ-ի համար հաշվարկված 19016 դրամ տույժը: Հարկային հաշվում ներկայացված տույժի օրերի քանակը հաշվարկվել է նրանց ամսական սպասարկման գումարը՝ 4500 դրամ, բազմապատկելով սպասարկման պայմանգրի 2.3 կետով ուշացված օրերի համար սահմանված 0.15% տույժի չափով: Այնուհետև հաշվարկված 19016 դրամը բաժանվել է վերը նշված գործողության արտադրյալին՝ 6.75 դրամին, որի արդյունքում և ստացվել է 2818 օր:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից ընդունվել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ընկերությամբ հանդեպ ունեցած 27.0 հազ. դրամ պարտքը, որի համար հաշվարկված է նշված տույժը և այն վճարվել է մայիս ամսին՝ առանց տույժերի գումարի:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի
վարչության պետի *Ի. Կուբատյան*